ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունը «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին ինձ/Ընկերությանը ներկայացնելու բանկային այլ ծառայությունների առաջարկներ:

Սույնով տալիս եմ իմ/Ընկերության համաձայնությունն առ այն, որ սույն համաձայնության ստորագրման/տրամադրման պահից մինչև Բանկի հետ հաստատված իրավահարաբերության ավարտը ցանկացած պահի առանց ինձ/Ընկերությանը նախապես տեղյակ պահելու մեկից ավելի անգամ Բանկը **կատարի հարցումներ** «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության վարկային բյուրոյին, ստանա և տրամադրի իմ/Ընկերության ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, վարկային զեկույցներ, առևտրա-վարկային, հարկային զեկույցներ՝ հետևյալ աղյուսակում նշված նպատակով՝

Նպատակ	Ժամկետ	Ազդեցությունը վարկային սքորի վրա	Պարտադիրությունը	Հաճախականությունը
Այլ բանկային ծառայություններ	Իրավահարաբերության ամբողջ ընթացքում	Չի ազդում կամ ցածր հավանականությամբ է ազդում	Ոչ պարտադիր	Սահմանված չէ

Տեղեկացված եմ, որ վերոնշյալ հարցումները կարող են ազդել իմ/Ընկերության վարկային սքորի վրա վերոնշյալ աղյուսակում նշված կերպով:

Տեղեկացված եմ, որ ցանկացած ժամանակ կարող եմ հրաժարվել տրված համաձայնությունից, բացառությամբ, եթե իմ/Ընկերության և Բանկի միջև արդեն ծագել դրամային պարտավորություններ ենթադրող հարաբերություններ:

Հավաստում եմ, որ կարդացել եմ համաձայնության տեքստը և այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի, ընկալելի և ընդունելի է:

Սույն համաձայնությունը տրված է համարվում այն որևէ եղականով ստորագրելու կամ Բանկի առցանց համակարգում կամ բջջային հավելվածում (online banking կամ mobile banking) համապատասխան նշում կատարելու պահից: